ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)
2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.
գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան - ի.գ.թ
գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -
պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.
Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.
Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.
Արմեն Հայկյանց - ի.գ.դ.
Դավիթ Ավետիսյան - ի.գ.թ.
Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.
Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.
Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.
Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
էլ. կայք՝
http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 8 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
24.12.2019
Հանձնված է տպագրության
15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ь Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)

2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.
зам. главного редактора
Карен Геворгян - к.ю.н.
зам. главного редактора
Ашот Петросян -
ответственный секретарь
Геворг Даниелян - д.ю.н.
Арутюн Хачикян - д.ю.н.
Николай Стойко - д.ю.н.
Армен Айкянц - д.ю.н.
Давид Аветисян - к.ю.н.
Артур Вагаршян - д.ю.н.
Сергей Аракелян - д.ю.н.
Ваге Оганнесян - д.ю.н.
Тарон Симонян - к.ю.н.

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Արտակ Հովհաննիսյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քրեական դատավարության ամբիոնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մարդկությունը մինչ օրս չի կողմնորոշվել ինֆորմացիայի սուբստանցիոնալ էության շուրջ: Այն հարցին, թե, ի վերջո, ի՞նչ է իրենից ներկայացնում ինֆորմացիան՝ մատերիա՞, թե՞ էներգիա, կիբեռնետիկայի հիմնադիր Նորբերտ Վիները պատասխանում է. «Ինֆորմացիան մատերիա չէ, և ոչ էլ էներգիա, ինֆորմացիան՝ ինֆորմացիա է»[1]: Այս արտահայտության մեջ ակնհայտորեն երևում է ինֆորմացիայի՝ որպես օբյեկտիվ իրականության երևույթի բարդության և բազմաշերտության հատկանիշը, որը գրեթե անհնար է դարձնում այն ժամանակակից գիտական մեթոդոլոգիայի և տեխնոլոգիաների միջոցով սպառիչ կերպով ճանաչելու հնարավորությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, տեղեկատվական հասարակության ձևավորումն իրենց ազդեցությունն են ունենում բոլոր հասարակական հարաբերությունների վրա, և բացառություն չեն նաև օպերատիվ-հետախուզական ճանաչման կապակցությամբ ծագող հասարակական հարաբերությունները:

Տեղեկատվական հասարակության ձևավորումը բարդ և հակասական սոցիալ-պատմական գործընթաց է: Այն սկսել է ձևավորվել XX-րդ դարի երկրորդ կեսից, երբ մարդկության պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ տեղեկատվական «պայթյուն», և որակապես փոխվեցին տեղեկատվական հոսքերի դերն ու նշանակությունը հասարակության կյանքում: Սակայն, միաժամանակ, պետք է արձանագրենք, որ օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի էության իմաստավորման, նրա սոցիալական նշանակության տեսական ընկալման ոլորտում մասնագիտական հանրությունը չի կարողացել որակական թռիչք արձանագրել: Դրական տեղաշարժեր այս առումով հնարավոր եղավ ապահովել միայն վերջին տարիներին, երբ ի հայտ եկան մենագրություններ, որտեղ արտացոլված էին ՕՀԳ ինֆորմացիոն ապահովման իրավական և կազմակերպական ասպեկտները[2]:

Օպերատիվ-հետախուզական օրենքում օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի հասկացությունը սահմանված չէ: Այդ հասկացության սահմանումները մենք հանդիպում ենք մասնագիտական գրականությունում: Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի հասկացության՝ մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեսաբանների կողմից որպես օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի հիմնական հատկանիշներ դիտարկվում են՝ բովանդակությունը, ստացման և օգտագործման նպատակը, հատուկ ընթացակարգը (մեթոդիկան, մարտավարությունը), սուբյեկտային կազմը:

---

[1] Տե՛ս **Винер Н.** Кибернетика, или управление и связь в животном и машине / 2-е издание. – М.: Наука; Главная редакция изданий для зарубежных стран, 1983, էջ 9:

[2] Տե՛ս օրինակ՝ **Голубовский В.Ю.** Теоретические и правовые аспекты информационного обеспечения оперативно-розыскной деятельности. – СПб.: Санкт Петербургский университет МВД РФ, 2000.; **Шумилов А.Ю.** Основы уголовно-правовой оценки сыскной информации. – М.: Изд-во «Шумилов И.И.», 2000:

Սակայն այդ հատկանիշների մասին տարբեր գիտնականներ ունեն ոչ միատեսակ մոտեցում, ինչն էլ պայմանավորում է նրանց կողմից առաջարկվող սահմանումների վերլուծության անհրաժեշտությունը:

Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի հասկացությունը սահմանելու առաջին փորձերից մեկը կատարել է Ս.Ս. Օվչինսկին: Նա օպերատիվ-հետախուզական ինֆորմացիա ասելով հասկանում էր սոցիալական ինֆորմացիայի մի տարատեսակ, որն «ունի ստացման հատուկ նպատակ (պայքարը հանցավորության դեմ), ստացման հատուկ մեթոդներ ու օգտագործման ռեժիմ, որոնք ապահովում են կոնսպիրացիան, աղբյուրների հուսալի ծածկագրումը, տեղեկությունների ստուգման հնարավորությունը և դրանց կիրառումը միայն շահագրգիռ օպերատիվ աշխատակիցների և քննչական մարմինների կողմից»[1]:

Դ.Վ. Գրեբելսկին օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի տակ հասկանում էր նախնական ու ելակետային տվյալների համակցություն, որը վերաբերում է հանցագործության նախապատրաստմանն ու կատարմանը մասնակից անձանց, հանցավոր երևույթներին ու փաստերին, օպերատիվ-հետախուզական ուժերին ու միջոցներին, ինչպես նաև այն պայմաններին, որոնցում ընթանում էր միլիցիայի մարմինների գործունեությունը հանցավորության դեմ պայքարում[2]:

Դ.Վ. Գրեբելսկու առաջարկած սահմանման մեջ «տվյալների համակցություն» եզրույթի օգտագործման առնչությամբ իր անհամաձայնությունն էր հայտնում Վ.Ա. Լուկաշովը: Նա, մասնավորապես, կարծում էր, որ այդպիսի մոտեցման դեպքում օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի էության վերաբերյալ պատկերացումները անարդարացիորեն ընդլայնվում են՝ անխուսափելիորեն ընդգրկելով տեղեկություններ տնտեսական, ժողովրդագրական և այլ պայմանների մասին, որոնք հաշվի են առնվում օպերատիվ իրադրության ուսումնասիրման և հանցավորության դեմ պայքարի կազմակերպման ժամանակ. «Լինելով լայն իմաստով սոցիալական ինֆորմացիայի բաղադրատարրեր՝ այդ տեղեկությունները չունեն օպերատիվ-հետախուզական ինֆորմացիային յուրահատուկ հատկանիշները՝ ոչ դրանց ստացման աղբյուրների և ոչ էլ օպերատիվ-հետախուզական գործունեությունում օգտագործման նպատակների տեսանկյունից»[3]:

Ի տարբերություն Դ.Վ. Գրեբելսկու, Վ.Ա. Լուկաշովը օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի բովանդակությունը բացահայտում էր այլ բաղադրատարրերի միջոցով. տեղեկություններ, որոնք բնութագրում են՝ օպերատիվ-մարտավարական իրադրությունը, հանցագործության նախապատրաստման ու կատարման մեջ կասկածվող անձանց հոգեբանական գծերը, ընթացիկ օպերատիվ-հետախուզական ու պրոֆիլակտիկ միջոցառումները, հանցագործությունների կատարման եղանակներն ու միջոցները, հանցագործների ու հափշտակված իրերի արտաքին բնութագրիչ գծերը, ինչպես նաև տեղեկություններ մտահղացվող և նախապատրաստվող հանցագործությունների, այն հանգամանքների մասին, որոնք անմիջական կամ պոտենցիալ նշանակություն ունեն օպերատիվ-հետախուզական միջոցառումների պլանավորման ու անցկացման, օպերատիվ-վերլուծական աշխատանքի իրականացման, նախնական քննությանը օժանդակություն ցուցաբերելու համար[4]:

Ա. Լ. Կովաչովը օպերատիվ-հետախուզական ինֆորմացիան սահմանում է որ-

---

[1] Տե՛ս **Овчинский С.С.** Оперативно-розыскная информация / под. ред. А.С. Овчинского и В.С. Овчинского. – М.: Инфра-М, 2000, էջ 39:

[2] Տե՛ս **Гребельский Д.В.** О соотношении криминалистических и оперативно-розыскных характеристик преступлений // Криминалистическая характеристика преступлений. Сб. науч. статей. – М., 1984, էջ 73-74:

[3] Տե՛ս **Лукашов В.А.** Введение в курс «Оперативно-розыскная деятельность органов внутренних дел». Киев, 1976, էջ 26-28:

[4] Նույն տեղում, էջ 30-31:

պես «տեղեկությունների, տվյալների ամբողջություն, որոնց ծավալն ու բովանդակությունը այս կամ այն չափով վերացնում են օպերատիվ իրադրության մասին գիտելիքների անորոշությունը..., համապատասխանում են օպերատիվ մարմինների գործունեության նպատակներին ու խնդիրներին, և որոնք կիրառվում են հանցագործությունների նախազգուշացման և բացահայտման, ինչպես նաև ներքին կառավարչական գործունեության մեջ»[1]:

Իր իմաստով Ա. Լ. Կովաչովի առաջարկած սահմանմանը մոտ տեսակետ է հայտնում Ի. Մ. Վոլչկովը. «Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիան օպերատիվ-հետախուզական գործունեության համակարգի ուժերի, միջոցների և մեթոդների կառավարման միջոցով դրա սուբյեկտի կողմից ստացված և հատուկ ռեսուրս կազմող բազմապիսի փաստական տվյալներն են, տեղեկություններ և գիտելիքներ, որոնց ծավալն ու բովանդակությունը վերացնում է անորոշությունը և ապահովում է նշված համակարգի գործունեությունը օպերատիվ-հետախուզական օրենքով սահմանված՝ օպերատիվ մարմինների առջև դրված խնդիրների լուծումը»[2]:

Ի տարբերություն այլ հեղինակների, Ա. Լ. Կովաչովն ու Ի. Մ. Վոլչկովը կիրառում են «անորոշություն» եզրույթը, որը, կարծում ենք, հատուկ բացատրության կարիք ունի:

Ինֆորմացիայի տեսության կենտրոնական հասկացությունների շարքում լայնորեն կիրառվում է «անորոշ իրավիճակ (էնթրոպիա)» հասկացությունը: Անորոշությունը կարող է բնութագրական լինել ինչպես օբյեկտների վերաբերյալ գիտելիքներին, այնպես էլ տվյալ օբյեկտին: «Եթե որևէ օբյեկտի վերաբերյալ մեր գիտելիքներում գոյություն ունի անորոշություն, ոչ հստակություն, իսկ, ստանալով նոր տեղեկություններ այդ առարկայի մասին, մենք կարող ենք առավել որոշակիորեն դատել դրա վերաբերյալ, ապա դա նշանակում է, որ այդ տեղեկությունը պարունակել է ինֆորմացիա»[3]: Եթե հաղորդումը չի նվազեցնում անորոշության աստիճանը, ապա դիտարկվող տեսության դիրքերից ենթադրվում է, որ այն ինֆորմացիա չի պարունակում:

Այս կոնցեպցիան բավական արդյունավետ է կարողանում պարզաբանել ինֆորմացիոն գործընթացները, որոնք տեղի են ունենում հանցագործությունների բացահայտման, դրանք կատարած անձանց հետախուզման (որոնման) շրջանակներում, երբ վարկածների ստուգումը ազդարարում է որևէ անորոշության վերացում և նոր անորոշության ծնունդ՝ մինչ այն պահը, քանի դեռ տեղեկատվական հոսքը չի բերի ընդհանուր անորոշության վերացման:

Վ.Մ. Ատմաժիտովը, «օպերատիվ-հետախուզական ինֆորմացիա» հասկացությունը սահմանելիս, առաջին պլան է մղում այդ ինֆորմացիան ստացող սուբյեկտին: Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի ներքո նա հասկանում է օպերատիվ-հետախուզական գործունեության սուբյեկտի կողմից հատուկ մեթոդների և միջոցների օգնությամբ ստացվող փաստացի տվյալները, որոնք պարունակում են հանցագործությունների կանխման և բացահայտման, հետախուզական աշխատանքի և հանցավորության դեմ պայքարի այլ խնդիրների լուծման համար անհրաժեշտ և պիտանի գիտելիքներ[4]:

Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի հատկանիշների մանրամասն

---

[1] Ա.Լ. Կովաչովից մեջբերումն ըստ՝ **Волчков И. М.** Реализация оперативно-розыскной информации: теоретико-методологические проблемы: монография. – Псков: Псков. юрид. ин-т ФСИН России, 2011, էջ 22:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 23:

[3] Տե՛ս **Урсул А.Д.** Отражение и информация. – М: Мысль, 1973, էջ 32:

[4] Տե՛ս **Атмажитов В.М.** Реализация оперативно-розыскной информации: Лекция. – М.: Академия МВД СССР, 1984, էջ11: **Атмажитов В.М., Яковец Е.Н.** Информационное обеспечение оперативно-розыскной деятельности органов внутренних дел. – М., 2003, էջ 8:

մատնանշմամբ աչքի է ընկնում Վ. Յու. Գոլուբովսկու առաջարկած սահմանումը. «Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիան օպերատիվ-հետախուզական օրենքով և օպերատիվ-հետախուզական գործունեության մարտավարությունը կարգավորող գերատեսչական նորմատիվ ակտերով նախատեսված կարգով ստացված տեղեկություններ են անձանց (ֆիզիկական անձանց խմբերի), առարկաների, փաստաթղթերի, փաստերի, իրադարձությունների, երևույթների և գործընթացների մասին, որոնք ամրագրված են նույնականացման հնարավորություն ստեղծող ռեկվիզիտային նյութական կրիչների վրա և կենտրոնացված ինֆորմացիոն համակարգերում և օպերատիվ հաշվառման գործերում»[1]:

Ինչպես տեսնում ենք, Վ. Յու. Գոլուբովսկու սահմանման մեջ առանձնահատուկ նշանակություն է տրվում օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի նյութական կրիչների վրա ամրագրված լինելուն, ինչը նշանակում է, որ օպերատիվ-հետախուզական ինֆորմացիային վերաբերում է միայն որոշակի կանոններով ամրագրում ստացած ինֆորմացիան:

Քննարկված հասկացություններում հեղինակները որպես օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի օգտագործման նպատակ հիմնականում նշում են հանցավորության դեմ պայքարի խնդիրների լուծումը, ինչը, մեր կարծիքով, չի բացահայտում դրանում «պարփակված» ողջ պոտենցիալը, քանի որ օպերատիվ-հետախուզական ինֆորմացիան պրակտիկայում օգտագործվում է նաև օպերատիվ-հետախուզական գործունեության այլ՝ այսպես կոչված ոչ քրեաիրավական խնդիրները լուծելիս:

Խնդրո առարկայի շուրջ տեսական քննարկումների ու բանավեճերի արդյունքում օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի սոցիալական բնության ճանաչման համար որոշիչ պետք է համարել գիտնականների կողմից այդ ինֆորմացիայի ստացման աղբյուրների, մեթոդների ու հնարքների յուրահատկությունը (մարտավարական տարրը), էնթրոպիայի վերացման ունակությունը, ինչպես նաև նյութական ռեկվիզիտային կրիչներում ամրագրված լինելը օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի էական հատկանիշներ դիտարկելը:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի հասկացության սահմանումը պետք է ներառի այնպիսի էական հատկանիշներ, որոնք կարող են պատասխանել հետևյալ հարցերին՝ «ի՞նչ է այն իրենից ներկայացնում», «ո՞վ և ինչպե՞ս է այն ստանում», «ինչպե՞ս է այն ամրագրվում», «ինչպե՞ս է այն օգտագործվում»:

Հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի հասկացության՝ վերը ուսումնասիրված սահմանումների վերլուծությունը՝ մենք առաջարկում ենք այդ հասկացության հեղինակային սահմանումը. «Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիան օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների աշխատակիցների կողմից օպերատիվ-հետախուզական գործունեության ուժերի, միջոցների ու մեթոդների կիրառմամբ, այդ գործունեության խնդիրների լուծման նպատակով հավաքված, ստուգված, ինֆորմացիոն համակարգերում ու օպերատիվ հաշվառման գործերում ամրագրված տեղեկություններն են՝ անձանց, առարկաների, փաստաթղթերի, փաստերի, իրադարձությունների, երևույթների և գործընթացների մասին»:

---

[1] **Голубовский В. Ю.** Теория и практика информационного обеспечения оперативно-розыскной деятельности подразделений криминальной милиции: дис. … д.ю.н.: 12.00.09. – СПб., 2001, էջ 41:

ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПОНЯТИЯ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ИНФОРМАЦИИ

Артак Оганесян
Начальник кафедры уголовного процесса
Академии образовательного комплекса полиции РА,
подполковник полиции, кандидат юридических наук, доцент

В статье проводится логический анализ определений понятия «оперативно-розыскная информация», встречающихся в литературе. На основе проведенного анализа сформулированы требования, предъявляемые к существенным признакам, которые должны использоваться при конструировании понятия «оперативно-розыскная информация». Предлагается авторское определение понятия «оперативно-розыскная информация».

PROBLEMS OF DEFINITION OPERATIONAL-INVESTIGATIVE INFORMATION

Artak Hovhannisyan
Head of the Department of criminal procedure of the
Academy of the RA police educational complex,
Police Lieutenant Colonel, Candidate of Legal Sciences, Associate Professor

The article presents a logical analysis of definitions of operational-investigative information which are mentioned in the literature. On the basis of the conducted analysis, the author formulates the requirements for essential features that should be used when designing the concept of operational-investigative information. The author suggests the definition of the operational-investigative information.

Բանալի բառեր – *օպերատիվ-հետախուզական ինֆորմացիա, օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ աշխատակից:*
Ключевые слова: *оперативно-розыскная информация, оперативно-розыскная деятельность, оперативный сотрудник.*
Keywords: *operational-investigative information, investigative operations, operations officer.*